ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

8 ապրիլի 2019 թվականի N 79-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԳԱՅԱՆԵ ՊԵՏՐՈՍՅԱՆԻՆ 2019 ԹՎԱԿԱՆԻ 2-ՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՀԱՄԱՐ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 24-ի N 45-Ն որոշման հավելվածի 7-րդ կետի 1-ին, 2-րդ ենթակետերի «ա» պարբերության, ***որոշում եմ.***

Անհատ ձեռնարկատեր Գայանե Պետրոսյանին (ՀՎՀՀ՝ 35122263, պետական ռեգիստրի գրանցման համարը՝ 269.857284/2015-05-13, իրավաբանական հասցեն՝ քաղաք Երևան Եղբայրության փողոց 6, 23, գործունեության տեսակի իրականացման վայրը՝ գյուղ Աշոցք 5 փողոց 17, ընդհանուր մակերեսը՝ 25 քառակուսի մետր) 2019 թվականի 2-րդ եռամսյակի համար տալ ոգելից խմիչքների, ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 8
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2019 թվականի N 80-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՎՇՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ԱՐՍԵՆ ՄՈՒՐԱԴՅԱՆԻՆ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի, Հայաստանի Հանրապետության «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթներով, ***որոշում եմ.***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի վարչական ղեկավար Արսեն Մուրադյանին 2019 թվականի ապրիլի 11-ից ազատել զբաղեցրած պաշտոնից:
2. Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահին՝ կատարել վերջնահաշվարկ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2019 թվականի N 81-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԹԱՎՇՈՒՏ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԻԳԻԹ ՍԵՐՅՈԺԱՅԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 1-ին մասի և «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի դրույթներով, ***որոշում եմ.***

1. Իգիթ Սերյոժայի Առաքելյանին 2019 թվականի ապրիլի 12-ից նշանակել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի Թավշուտ բնակավայրի վարչական ղեկավար:

2. Վարձատրությունը՝ ըստ հաստիքացուցակի համաձայն սահմանված պաշտոնային դրույքաչափի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 11
գյուղ Աշոցք

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 ապրիլի 2019 թվականի N 82-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԻ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 8 ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՄՆԵՐՈՒՄ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ (ԸՆԴՈՒՆՄԱՆ) ՀԱՎԱՔԱԿԱՅԱՆՆԵՐ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի օգոստոսի 18-ի «Վտանգավոր տարածքից բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման կարգը հաստատելու մասին» թիվ 1180-Ն որոշման, «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 11-րդ, 16-րդ և «Քաղաքացիական պաշտպանության մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 14-րդ հոդվածների դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետի 2015 թվականի փետրվարի 25-ի N27-Ա և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի Հայաստանի 2019 թվականի ապրիլի 4-ի N75-Ա որոշումները, արտակարգ իրավիճակների և ռազմական դրության ժամանակ նախապես բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման պլանավորման, նախապատրաստման և միջոցառումների անցկացման ապահովման նպատակով, ***որոշում եմ՝***

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի բնակչության տարահանման հանձնաժողովի (այսուհետ տարահանման հանձնաժողով) կազմը՝ համաձայն հավելված 1-ի:

2. Տարահանման հանձնաժողովի կազմում ստեղծել աշխատանքային խմբեր՝ համաձայն հավելված 2-ի:

3. Հաստատել տարահանման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելված 3-ի:

4. Առաջարկել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքում գործող կազմակերպությունների ղեկավարներին՝ ստեղծել օբյեկտային տարահանման հանձնաժողովներ և նրանց կազմում աշխատանքային խմբեր, երկամսյա ժամկետում կազմել կազմակերպությունների տարահանման պլաններ՝ համաձայնեցնելով Շիրակի մարզային

փրկարարական վարչության հետ:

5. Տարահանման հանձնաժողովին՝ համագործակցելով Շիրակի մարզային փրկարարական վարչության հետ եռամսյա ժամկետում լրամշակել «Աշոցք համայնքի բնակչության տարահանման պլանը» և ներկայացնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի հաստատմանը:

6. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի թվով 8 բնակավայրերի ուսումնական հաստատություններում ստեղծել բնակչության տարահանման (ընդունման) հավաքակայաններ՝ ՏՀԿ (ԸՀԿ) առանձին 19, 20, 43, 44, 45, 46, 47, 48, 49 թվերով համարակալված:

7. Աշոցք համայնքի բնակչության տարահանման (ընդունման) հավաքակայաններում պետ և պետի տեղակալներ նշանակել համապատասխան ուսումնական հաստատությունների տնօրեններին և նրանց տեղակալներին:

8. Աշոցք համայնքի բնակչության տարահանման հավաքակայանների պետերին՝ որոշել տարահանման (ընդունման) հավաքակայանների կառուցվածքը և վարչակազմը, հաստատել հաստիքացուցակները, տարահանման հանձնաժողովի նախագահի հաստատմանը ներկայացնել ՏՀԿ (ԸՀԿ) կանոնադրությունները, եռամսյա ժամկետում մշակել և հաստատել՝ ՏՀԿ (ԸՀԿ) կառուցվածքային մարմինների գործառնական պարտականությունները, ինչպես նաև ապահովել ՏՀԿ (ԸՀԿ) անհրաժեշտ փաստաթղթերի և մատյանների առկայությունը:

9.Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալի՝ տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019թ. ապրիլի 11
գյուղ Աշոցք

Հավելված 1
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք
համայնքի ղեկավարի 2019թ.
ապրիլի 11-ի N 82-Ա որոշման

Կ Ա Զ Մ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Կարեն Աբրեյան- հանձնաժողովի նախագահ, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալ,
Գևորգ Հովհաննիսյան- հանձնաժողովի նախագահի տեղակալ, Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ,
Գոհար Խաչատրյան - հանձնաժողովի քարտուղար, Աշոցքի համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար,

Հանձնաժողովի անդամներ՝

Հակոբյան Տիգրան - Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի օգնական
Սամվել Ավետիսյան - Աշոցքի միջնակարգ դպրոցի տնօրեն,
Արմեն Մարտիրոսյան - Աշոցք համայնքի ավագանու անդամ,
Արտակ Հովհաննիսյան- Աշոցք համայնքի ավագանու անդամ,
Քրիստինե Մարտիրոսյան - բուժքույր
Ռաֆայել Նահապետյան - Հայաստանի Հանրապետության ոստիկանության Շիրակի մարզային վարչության Աշոցքի բաժնի տեղամասային տեսուչ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ
ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 2
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք
համայնքի ղեկավարի 2019թ.
ապրիլի 11-ի N 82-Ա որոշման

Կ Ա Զ Մ Ե Ր
ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԽՄԲԵՐԻ

1.Վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբ.
Խմբի ղեկավար՝
Կարեն Մովսիսյան – Աշոցքի համայնքապետարանի տնտեսվար,
Խմբի անդամներ՝
Ցոլակ Սումբուլյան - Աշոցքի համայնքապետարանի բանվոր,
Արայիկ Ավագյան - Աշոցքի համայնքապետարանի մեխանիզատոր,

2. Անվտանգ գոտում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբ.
Խմբի ղեկավար՝
Միշա Առաքելյան – Աշոցքի ՍԾՏԳ գլխավոր մասնագետ,
Խմբի անդամներ՝
Եթերինա Կարապետյան - Աշոցքի համայնքապետարանի գործավար,
Արուսյակ Ղազարյան - Աշոցքի համայնքապետարանի 1-ին կարգի մասնագետ,

3. Հասարակական կարգի պահպանման խումբ՝
Խմբի ղեկավար՝
Աշոտ Հովհաննիսյան – Աշոցքի ՍԾՏԳ առաջատար մասնագետ,
Խմբի անդամներ.
Սամվել Սաղաթելյան – կեսաթոշակառու,
Անդրանիկ Առաքելյան – կեսաթոշակառու,

4. Տրանսպորտային ապահովման խումբ.
Խմբի ղեկավար՝
Արմեն Կարապետյան – Աշոցքի համայնքապետարանի վարորդ,
Խմբի անդամներ.
Արթուր Սարիբեկյան - Աշոցքի համայնքապետարանի վարորդ,
Արտուշ Սարիբեկյան - Աշոցքի համայնքապետարանի մեխանիզատոր,

5. Սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբ.
Խմբի ղեկավար՝
Մարինե Միքայելյան – Աշոցքի միջնակարգ դպրոցի ուսմասվար
Խմբի անդամներ.
Սարգիս Մելիքյան- Աշոցքի միջնակարգ դպրոցի տնտ. գծով փոխտնօրեն,
Լոնդա Անտանոսյան- Աշոցքի միջնակարգ դպրոցի ուսուցչուհի,

6.Գյուղ. կենդանիների հաշվառման և դուրս բերման խումբ.
Խմբի ղեկավար՝

Գագիկ Սարիբեկյան- Աշոցք համայնքի ավագանու անդամ,
Խմբի անդամներ.
Սերգո Սարգսյան- կենսաթոշակառու, անասնաբույժ,
Մարգարիտ Միքայելյան – անասնաբույժ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Հավելված 3
ՀՀ Շիրակի մարզի Աշոցք
համայնքի ղեկավարի 2019թ.
ապրիլի 11-ի N 82-Ա որոշման

Կանոնադրություն

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱՀԱՆՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

I. Ընդհանուր դրույթներ

1. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի տարահանման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) մասին կանոնադրությունը սահմանում է Աշոցք համայնքի տարահանման հանձաժողովի ստեղծման կարգը, կազմը և հիմնական խնդիրները խաղաղ պայմաններում, ԱԻ ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ:

2. Հանձնաժողովը ստեղծվում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարի որոշմամբ, որպես մշտական գործող տարահանման մարմին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ տարածքներ տարահանման միջոցառումների նախօրոք պլանավորման, տարահանման մարմինների ստեղծման ու նախապատրաստման և տարահանման միջոցառումների անցկացման ու բազմակողմանի ապահովման նպատակով:

3. Հանձնաժողովի գործունեության ընդհանուր ղեկավարումն իրականացնում է Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարը: Հանձնաժողովի անմիջական ղեկավարումը դրվում է Աշոցք համայնքի ղեկավարի տեղակալի՝ տարահանման հանձնաժողովի նախագահի վրա:

4. Հանձնաժողովն աշխատում է ՀՀ արտակարգ իրավիճակների հանձնաժողովի հետ համագործակցությամբ, որն իրականացնում է նրա գործունեության կազմակերպա-մեթոդական ապահովումը:

5. Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է «Քաղաքացիական պաշտպանության մասին» և «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության կառավարության որոշումներով, այլ նորմատիվ իրավական ակտերով և սույն Կանոնադրությամբ:

II. Հանձնաժողովի հիմնական խնդիրները

6. Խաղաղ ժամանակ՝

1) Հայաստանի Հանրապետության ԱԻՆ ՓԾ ՇՄՓՎ-ի հետ համատեղ ռազմական դրության ժամանակ և ԱԻ ծագման ու սպառնալիքի դեպքում բնակչության տարահանման պլանի մշակում և տարին մեկ անգամ ճշգրտում;

2) համայնքի տարահանման մարմինների ստեղծման, համալրման և նախապատրաստման կազմակերպում;

3) անվտանգ գոտում տարահանվող բնակչության, նյութական և մշակութային արժեքների տեղաբաշխման վայրերի ընտրում;

4) համայնքի տարահանման պլանների, ինչպես նաև տարահանվող բնակչության անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման, առաջնահերթ կենսաապահովման պլանների մշակման ընթացքի կազմակերպում;

5) մասնակցություն տարահանման մարմինների տարահանման միջոցառումների անցկացման պատրաստականության ստուգմանը: Նիստերի պարբերաբար անցկացում ստուգման արդյունքների վերլուծման համար;

6) զինվորական հրամանատարության հետ փոխհամագործակցության կազմակերպումը՝

տարահանման միջոցառումների պլանավորման, ապահովման և անցկացման հարցերով;

7) մասնակցություն քաղաքացիական պաշտպանության և արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության հարցերով ուսումնավարժություններին՝ մշակված տարահանման փաստաթղթերի իրականության ստուգման և տարահանման միջոցառումների կազմակերպման և անցկացման հարցերով գործնական հմտությունների ձեռքբերման նպատակով;

8) բնակչության, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտում ընդունման և տեղաբաշխման նախապատրաստման կազմակերպում, տարահանման փաստաթղթերի մշակում և հաշվառում:

7. ՔՊ համակարգը խաղաղից ռազմական դրության փոխադրելու դեպքում՝

1) կառավարման, կապի և ազդարարման համակարգերի պատրաստականության բերման, ինչպես նաև տարահանման մարմինների ծավալման կազմակերպում;

2) տարահանվող բնակչության թվաքանակի և կարգի ճշգրտում, տարահանման պլանների, տարահանման բոլոր տեսակների ապահովման իրականացման և կարգի ճշգրտում

3) բժշկական հաստատությունների, նյութական և մշակութային արժեքների անվտանգ գոտի դուրս բերման նախապատրաստման կազմակերպում;

4) վտանգավոր գոտուց, ինչպես նաև տարահանման միջանկյալ կետերից բնակչության դուրս բերման և անվտանգ վայրերում տեղաբաշխման համար հատկացված տրանսպորտային միջոցների նախապատրաստման կազմակերպում;

5) առկա պաշտպանական կառույցների պատրաստականության բերման կազմակերպում;

6) տարահանման հանձնաժողովի հետ անվտանգ գոտում ընդունման, տեղաբաշխման և բնակչության առաջնահերթ կենսապահովման պլանների ճշգրտում:

8. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

1) տարահանման մարմինների կողմից ժամանակին ազդարարման, հավաքի և տարահանված բնակչությանը անվտանգ վայրեր տեղափոխելու աշխատանքների կազմակերպում;

2) տարահանման միջոցառումների բազմակողմանի ապահովման, ընդունման, բաշխման և անվտանգ գոտում տարահանված բնակչության առաջնահերթ կենսապահովման աշխատանքների կազմակերպում;

3) հարևան մարզերի հետ փոխգործողությունների կազմակերպում՝ նրանց տարածքներում տարահանված բնակչության ընդունման և բաշխման հարցերով

4) տարահանման միջոցառումների անցկացման և ապահովման համար տարահանման մարմիններին անհրաժեշտ օգնության ցուցաբերում

5) տարահանման պլանի կատարման, տարահանման պլանի ճշգրտման ուղղությամբ առաջարկությունների մշակման կազմակերպում;

6) բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման մասին տվյալների հավաք և ամփոփում, դրա մասին զեկուցում մարզպետին:

9. Խաղաղ ժամանակ բնական և տեխնածին բնույթի ԱԻ ծագման սպառնալիքի դեպքում՝

1) տարահանվող բնակչության ընդունման և տեղաբաշխման պլանավորում;

2) կապի և ազդարարման համակարգերի պատրաստության ստուգում;

3) տարահանման ենթակա բնակչության թվաքանակի ճշտում;

4) տարահանման մարմինների ծավալման պատրաստության բերում;

5) տարահանման միջոցառումների ապահովման համար տրանսպորտի պատրաստության կազմակերպում;

6) առկա պաշտպանական կառույցների պատրաստության կազմակերպում;

7) անվտանգ վայրերում, ժամանակավոր տեղակայման կետերում տեղաբաշխման վայրերի պատրաստության հսկողություն:

10. Տարահանման անցկացման կարգադրություն ստանալիս՝

1) տարահանման միջոցառումների անցկացման ընթացքում կառավարման և կապի կազմակերպում;

2) տրանսպորտային ապահովման կազմակերպում;

3) չափաբաժնական (дозиметрический) հսկողության, բնակչության սանիտարական մշակման,

տեխնիկայի և հագուստի հատուկ մշակման (անհրաժեշտության դեպքում) կազմակերպում;

4) տարահանվող բնակչության ընդունման, հաշվառման և տեղաբաշխման վայրեր տեղափոխման կազմակերպում;

5) բնակչության առաջնահերթ կենսաապահովման կազմակերպում:

III. Հանձնաժողովի իրավունքները

11. Հանձնաժողովն իրավունք ունի՝

1) Իր իրավասությունների շրջանակներում ընդունելու որոշումներ, որոնք ենթակա են պարտադիր կատարման կազմակերպությունների, հաստատությունների և ձեռնարկությունների համար՝ կապված տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման հետ:

2) Հարցում անել կազմակերպություններից, հաստատություններից անհրաժեշտ տվյալների մասին՝ բնակչության, նյութական և մշակութային արժեքների տարահանման հարցերի ուսումնասիրման և որոշումների ընդունման համար:

3) Տարահանման միջոցառումների ապահովման հարցերով ունկնդրել կազմակերպությունների, հաստատությունների պաշտոնատար անձանց, սահմանված կարգով անցկացնել խորհրդակցություն տարահանման մարմինների ներկայացուցիչների հետ:

4) Տարահանման մարմինների գործունեության վրա սահմանել հսկողություն տարահանման միջոցառումների անցկացման պլանավորման և բազմակողմանի նախապատրաստման կազմակերպման հարցերով՝ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության մասնագետների ներգրավմամբ:

IV. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքը

12. Հանձնաժողովի կազմակերպական կառուցվածքում ընդգրկվում են՝

1) տարահանման հանձնաժողովի ղեկավարությունը;

2) վտանգավոր տարածքից բնակչության դուրս բերման հաշվառման խումբը;

3) անվտանգ տարածքում բնակչության տեղաբաշխման հաշվառման խումբը;

4) տրանսպորտային ապահովման խումբը;

5) հիվանդանոցի անձնակազմի և հիվանդների անվտանգ դուրս բերման հաշվառման խումբը;

6) սննդամթերքի և նյութական արժեքների պաշարների հաշվառման խումբը:

13. Հանձնաժողովի կազմում նշանակվում են տեղական ինքնակառավարման մարմինների, տարահանման միջոցառումների ապահովմանը մասնակցող կապ ապահովող կազմակերպության, տնտեսության օբյեկտների պաշտոնատար անձինք՝ բացառությամբ զորահավաքային կարգադրագիր ունեցող անձանց:

V. Հանձնաժողովի աշխատանքային կարգը

14.Հանձնաժողովի նախագահը կրում է անձնական պատասխանատվություն խաղաղ ժամանակ, արտակարգ իրավիճակների ծագման դեպքում և ռազմական դրության ժամանակ տարահանման հանձնաժողովի վրա դրված խնդիրների կատարման համար:

15. Հանձնաժողովի աշխատանքը իրականացվում է տարեկան աշխատանքային պլանով: Հանձնաժողովի աշխատանքային պլանը մշակվում է Հանձնաժողովի քարտուղարի կողմից՝ համագործակցելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչության (այսուհետ՝ ՄՓՎ) հետ, և հաստատվում է Հանձնաժողովի նախագահի կողմից:

16. Հանձնաժողովի որոշումները ձևակերպվում են Հանձնաժողովի արձանագրություններով և ստորագրվում Հանձնաժողովի նախագահի և քարտուղարի կողմից:

17. Հանձնաժողովի նիստերն անցկացվում են առնվազն եռամսյակը մեկ անգամ՝ Հանձնաժողովի նախագահի ղեկավարությամբ: Հանձնաժողովի նիստերը և արձանագրությունների նախագծերը պատրաստում է Հանձնաժողովի աշխատանքային խումբը:

18. Հանձնաժողովի առանձին պլանային և արտապլանային նիստերը կարող է անցկացնել Հանձնաժողովի նախագահի տեղակալը՝ Հանձնաժողովի նախագահի հանձնարարությամբ:

19. Հանձնաժողովի անդամների աշխատատեղեր (հավաքի հաստատված վայրեր) ժամանելու համար սահմանվում են ժամկետները.

1) աշխատանքային ժամին՝ 30 րոպե
2) ոչ աշխատանքային ժամին՝ 1ժամ 30րոպե (ձմեռային ժամանակ՝ 2 ժամ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Աշոցք համայնք,գ Աշոցք
հասցե՝ 2801, գ. Աշոցք, Հրապարակ 1,
հեռախոս՝ (0245)2-10-50, 2-14-82,
էլ. փոստ՝ ashotsq.shirak@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

12 ապրիլի 2019 թվականի N 83 - Ա

ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ ՌՈՄԱՆ ՎՈԼՈԴՅԱՅԻ ԱՍԱՏՐՅԱՆԻՆ ԵՎ ՌՈԶԱ ՍԵՅՐԱՆԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՅԱՆԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ, 08-015-044-001-002-015 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ԲՆԱԿԱՐԱՆԻՆ ՀԱՍՑԵ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 29-րդ, 48-րդ կետերով և հիմք ընդունելով Ռոման Վոլոդյայի Ասատրյանի 2019 թվականի ապրիլի 12-ի Հայաստանի Հանրապետություն Շիրակի մարզի Աշոցք համայնքի ղեկավարին հասցեագրած դիմումը, **որոշում եմ**.

քաղաքացիներ Ռոման Վոլոդյայի Ասատրյանին և Ռոզա Սեյրանի Հարությունյանին սեփականության իրավունքով պատկանող, 08-015-044-001-002-015 կադաստրային ծածկագրով բնակարանին /գրանցված՝ 2007 թվականի մարտի 7-ին, վկայական N 2042764/ տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետութուն Շիրակի մարզ, Աշոցք համայնք, գյուղ Աշոցք, 5-րդ փողոց, 1-ին անցուղի, շենք 1/1, բնակարան 15:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՇՈՑՔ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԿԱՐԵՆ ՄԱՆՈՒԿՅԱՆ

2019 թվականի ապրիլի 12
գյուղ Աշոցք